

ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյան

«Դիսաբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպության
համակարգող Մուշեղ Հովսեփյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Արթուր Նալբանդյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել **Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոցի, Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դպրոցի, Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի, Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոցի, Վանաձորի թիվ 9 հիմնական դպրոցի, Վանաձորի թիվ 30 հիմնական դպրոցի, Վանաձորի թիվ 17 ավագ դպրոցի, Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի** համար 2007 թվականից հետո կառուցման/վերակառուցման կամ հիմնանորոգման նպատակով ծախսված գումարների թիվը և ֆինանսավորման աղբյուրը յուրաքանչյուրի համար:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ՝

Մուշեղ Հովսեփյան

12/01/2018

